այնպէս վրդովեց կիսավայրենի աղջկայ սիրտը: Միթէ՞ նրան եւս տանջում էր հայի թշոառութիւնը...

ԻԵ. Ի՞ՆՉ Է ՔՈՒՐԴԸ ԵՒ Ի՞ՆՉ Է ԹՈՒՐՔԸ

Ծերունի որորդի վարդապետութիւնը որքան եւ անմարդասիրական լինէր, որքան եւ ունենար վայրենի, անխաղաղասէր բնաւորութիւն, դարձեալ նա մի բողոք էր իր ժամանակի բարբարոսութեան եւ հարստահարութեան դէմ: Մի մարդ, որպէս էր ծերունի որսորդը, բռնութեան կոպիտ ձեռքից այնքան դառն հարուածներ կրած մարդ, չէր կարող այլապէս մտածել: Ինքը կեանքը, իրան շրջապատող հանգամանքները մտցրել էին նրա մէջ այն սարսափելի վրէժխնդրութիւնը դէպի ամէն անարդարութիւն, որ խլում է խաղաղասէր երկրագործի բարին, որ զրկում է նրան օրական ապրուստից, եւ մինչեւ անգամ սրբապղծում է նրա ընտանեկան պատիւը:

Ծերունի որսորդի տնակը կանգնած էր այն լեռնագօտիի վրայ, որ կազմում էր բնական սահման, բաժանելով Տաճկաստանը Պարսկաստանից: Իւրաքանչիւր բաժինը պարունակում էր իր մէջ երկրի ընդարձակ տարածութիւն, բնակեցրած մեծ մասամբ հայերով: Պարսկաստանի մասնում գտնւում էր Ատրպատական նահանգը իր զանազան գաւառներով. իսկ Տաճկաստանի մասնում՝ Վասպուրականի, Տարօնի եւ Արզրումի նահանգներն իրանց գաւառներով: Ես կը գրէմ իւրաքանչիւրի մասին որքան յիշում եմ, որքան վերաբերում է իմ պատմութեանը:

Սարսափելի՜ էին այն ժամանկները...

Այդ այն ժամանակն էր, երբ Տարօնը եւ Վասպուրականը թէեւ Տաճկաստանի մի մասն էին կազմում, բայց քրդերի զանազան ցեղերը, օգուտ քաղելով սուլթանի պետութեան թուլութիւնից, տիրում էին Հայաստանի այդ երկու ամենամեծ նահանգներին, սկսեալ Սեւ ծովի հարաւա-արեւելեան եզերքից, Եփրատ գետից, մինչեւ Միջագետքի եւ Պարսկաստանի սահմանները:

Յիշեալ նահանգները պարունակում էին նրանց մէջ հետեւեալ գաւառները՝ Հաքարի, Բայազեդ, Հաղբակ, Վան, Բաղէշ (Բիթլիս), Մուշ, Շատախ, Սասուն, Խիզան, Մոգաց երկիր, Չարսանջակ, Քեղու եւ այլն-այդ գաւառներին տիրում էին քրդերը:

Մնացեալ ազգաբնակչութիւնները, բացի քրդերից, էին՝ հայեր, ասորիներ, հրէաներ, թուրքեր, եզիդիներ, եւ զանազան թափառաշրջիկ ցեղեր: